ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

Երևան-10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

N 02/19.2/4962-2020 «11» 02 2020թ.

«ԻՆՖԻՆԻՏԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ԵՐԻԶԱՆՅԱՆԻՆ
/ք. Երևան, Նորքի 1 նրբ.,տ.5/

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

ՀՀ կառավարությանը ենթակա քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով՝ 11.07.2019թ. վարչապետի աշխատակազմի և «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև կնքել է ՈՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-19/5-3 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի 1-ին կետի համաձայն՝ Վաճառողը (տվյալ դեպքում՝ «Ինֆինիտի Գրուպ» ՍՊԸ-ն) պարտավորվում է քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կարիքների համար նույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված կենցաղային ապրանքներ և նյութեր (այսուհետ՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է

պայմանագիրը: Վաճառողի կողմից խախտումն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ վարչապետի աշխատակազմը՝ ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի հրաժարվում է 11.07.2019թ. Ընկերության հետ կնքված ՈՎԱՔՏ-ԳՀԱՊՁԲ-19/5-3 ծածկագրով ապրանքների ձեռքբերման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն ամբողջությամբ լուծված:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն հրապարակել է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐԻՉ ՎԱՀԱՆ ՊԱՊԻԿՅԱՆ